

Արձանագրություն N 5
«ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի
հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«27» «դեկտեմբեր» 2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հակոբյան,

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Մկրտչյան, Հ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Կարապետյան

1. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստը վերսկսելու մասին

1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵՂ2/9019/02/24 քաղաքացիական գործով հրապարակված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին հրապարակված որոշումը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի նիստի թիվ 1 որոշմամբ գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 3 որոշման 3-րդ կետով հաստատված թիվ 12-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը կասեցվել է, մինչև թիվ ԵՂ2/9019/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը:

1.2 Հիմք ընդունելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵՂ2/9019/02/24 քաղաքացիական գործով հրապարակված վճիռը, գնահատող հանձնաժողովը որոշում է «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի նիստը՝ ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով վերսկսել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի
շրջանակներում դատարանի վճիռը (ստ 12.12.2024թ.) կատարելու մասին

2.1 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են նույն արձանագրության անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով, որի համաձայն

ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել «Մեդիտեք» ՍՊԸ-ն:

- 2.2 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.7 կետով հանձնաժողովը արձանագրել է հետևյալը՝
«Մեդիտեք» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Մակայն գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն փոխկապակցված է «ՊԼՈ» ՍՊԸ-ի հետ, որը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 19.05.2023թ. – 19.05.2025թ. ժամանակահատվածում:
- 2.3 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.8 կետով հանձնաժողովը որոշել է հետևյալը՝
Հիմք ընդունելով օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) պարբերությունը, օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը, հրավերի 2-րդ բաժնի 2.3-րդ և 8-րդ բաժնի 8.15-րդ կետերը, ինչպես նաև կարգի 121-րդ կետը, 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերությունը և 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
- 2.4 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 2 արձանագրության 3.8 կետը, որոշել է՝ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը չկայացած հայտարարել նաև 12-րդ չափաբաժնի մասով:
- 2.5 «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 17-ին կայացվել է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշում:
- 2.6 «Մեդիտեք» ՍՊԸ-ն 2024 թվականի հոկտեմբերի 24-ին հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան խնդրելով՝ անվավեր ճանաչել 14.10.2024թ.-ին ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 2 արձանագրության 3.8 կետով «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու որոշումը, ինչպես նաև անվավեր ճանաչել 17.10.2024թ.-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի կողմից կայացված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:
- 2.7 Հինք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 234.11-ի 1-ին մասը, համաձայն որի՝ Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի

գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/9019/02/24 քաղաքացիական գործով հրապարակված հայցադիմումը վարույթ ընդունելու մասին հրապարակված որոշումը «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 31-ի նիստի թիվ 1 որոշմամբ գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 3 որոշման 3-րդ կետով հաստատված՝ թիվ 12-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը կասեցվել է, մինչև թիվ ԵԴ2/9019/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը:

2.8 Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը թիվ ԵԴ2/9019/02/24 քաղաքացիական գործով 2024 թվականի դեկտեմբերի 12-ի վճռով որոշել է՝

«1. Մեղիտեք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի՝ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.10.2024 թվականին կազմված թիվ 2 արձանագրության 3.8-րդ կետով Մեղիտեք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը և Մեղիտեք ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի 17.10.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել ամբողջությամբ. 1.1. անվավեր ճանաչել ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.10.2024 թվականին կազմված թիվ 2 արձանագրության 3.8-րդ կետով Մեղիտեք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը. 1.2. անվավեր ճանաչել Մեղիտեք ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին հիմնադրամի ռեկտոր Արմեն Աբգարի Մուրադյանի 17.10.2024 թվականի որոշումը:»

2.9 Ուսումնասիրելով թիվ ԵԴ2/9019/02/24 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.12.2024թ.-ի վճիռը, հանձնաժողովը արձանագրում է, որ վճռի «Հանձնաժողովի որոշման իրավաչափ և պատճառաբանված լինելու վերաբերյալ Դատարանի իրավական վերլուծություններն ու եզրահանգումները» մասով Դատարանը արձանագրել է մասնավորապես հետևյալը

«Վճռով նշված փաստական հանգամանքների և սույն գործով ներկայացված հայցի հիմքում դրված փաստերի համադրված վերլուծությամբ Դատարանն արձանագրում է, որ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 14.10.2024 թվականին կազմված թիվ 2 արձանագրությամբ Մեղիտեք ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար

գնահատելու և հայտը մերժելու վերաբերյալ կայացված որոշումը (այսուհետ նաև՝ Հանձնաժողովի որոշում) չի պարունակում պատճառաբանություն: Մասնավորապես, Դատարանն արձանագրում է, որ վերագրելով Հայցվորին «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման գործընթացի խախտում, որոշմամբ չի բացահայտել, թե որն է այդ խախտման փաստական հիմքը, այն է՝ Հանձնաժողովի որոշումից պարզ չէ, թե ինչպիսի փաստական հանգամանքների հիման վրա է Հանձնաժողովը եզրակացրել, որ Մեդիտեք ՍՊԸ-ն և Պրո ՄՊԸ-ն հանդիսանում են փոխկապակցված անձինք, ինչը հիմք է հանդիսացել Հայցվորի ներկայացված հայտը մերժելու համար:

Փաստերի դասավորվածության նման պայմաններում Դատարանը հանգում է հետևության, որ Հանձնաժողովի որոշումը չի պարունակում պատճառաբանություն, և առկա չէ հիմնավորում, թե Ընթացակարգի ինչպիսի անհամապատասխանություններ են առկա եղել: Փաստորեն խախտումը ձևականորեն բնութագրվել է, սակայն որոշման մեջ այն բավականաչափ որոշակի չէ: Նման պայմաններում Դատարանը, գնահատելով գործում եղած սպացույցները, դեկլարվելով ներքին համոզմամբ, գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը անվավեր ճանաչելու հայցապահանջը հիմնավոր է և ենթակա է բավարարման:»

- 2.10 Ի կատարումն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից թիվ ԵԴ2/9019/02/24 քաղաքացիական գործով 2024 թվականի դեկտեմբերի 12-ին կայացված վճռի «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է՝
- 2.10.1 Անվավեր ճանաչել «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.7 կետով արձանագրված տեղեկատվությունը,
- 2.10.2 Անվավեր ճանաչել «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի նիստի թիվ 2 արձանագրության 3.8 կետով «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը,
- 2.10.3 Անվավեր ճանաչել «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 16-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով ընթացակարգը 12-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը,
- 2.10.4 Արձանագրել, որ դատարանի վճռով անվավեր է ճանաչվել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 2024 թվականի հոկտեմբերի 17-ին կայացրած «Մեդիտեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 09/1608 որոշումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը հրավերի 12-րդ չափաբաժնի մասով նոր գնահատման մասին

3.1 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 12-րդ չափաբաժնի մասով «Մեդիտեք» ՍՊԸ-ի հայտի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովը արձանագրում է՝

3.1.1 «Մեդիտեք» ՍՊԸ-ն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարության պատճենը կցված է սույն արձանագրությանը:

3.1.2 «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված է Օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններից հետևյալը՝ 13) լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

3.1.3 «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է լիազորված մարմինը:

3.1.4 «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 8-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը՝

1) համակարգում է գնումների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները և ընդունում կամ ներկայացնում է դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.

2) պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում.

8) հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը.

9) հաստատում է սույն օրենքի համաձայն լիազորված մարմին ներկայացվող փաստաթղթերի, ներառյալ՝ հաշվետվությունների ձևերը և դրանց ներկայացման ժամկետները.

3.1.5 «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ)

պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

3.1.6 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի իրավերի 2-րդ մասի 2.3-րդ կետով մասնավորապես սահմանված է՝

Մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժին), բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից,

Բացի այդ,

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

3.1.7 ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 121-րդ կետի համաձայն՝ Մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 3.1.8 Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝
- 1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝
- բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին:
- 3.1.9 Կարգի 32 կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
- 3.1.10 Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների փոխկապակցված անձանց ցուցակը վարում է լիազորված մարմինը՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունը:
- 3.1.11 ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.07.2024թ.-ի թիվ 03/26-1/15404-2024 Պատվիրատուներին ուղղված շրջաբերական գրությամբ մասնավորապես հայտնել է՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.07.2024թ.-ից սկսել է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների փոխկապակցված անձանց ցուցակ» բաժնում հրապարակել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձանց փոխկապակցված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն: Շրջաբերական գրության ամբողջական տարբերակի պատճենը կցվում է սույն արձանագրությանը:
- 3.1.12 «Մեդիտեք» ՍՊ ընկերությունը հայտերի բացման օրվա դրությամբ՝ 08.10.2024թ.-ին գտնվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն փոխկապակցված է «ՊԸՈ» ՍՊԸ-ի հետ, որը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Սույն արձանագրությանը կցվում է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրից կատարված արտատպման պատճենը՝ առ 08.10.2024թ.:
- 3.1.13 «ԷՍՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ն գտնվելով լիազորված մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում, մասնավորապես՝ փոխկապակցված լինելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող «Պրո» ՍՊԸ-ի հետ, նույն ժամանակահատվածում մասնակցության հայտ է

ներկայացրել «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին և իր կողմից ներկայացված հայտի դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է հետևյալը՝ «Մեդիտեք» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, դրանով իսկ խախտելով՝

ա/ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության՝ «խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը» պահանջը,

բ/ Կարգի 121-րդ կետը ամբողջությամբ,

գ/ Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության պահանջների ի հակառակ, իր կողմից ներկայացված հայտի դիմում հայտարարությամբ ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

Բացի այդ, հիմք ընդունելով Կարգի 32 կետի 19-րդ ենթակետը՝ մասնակցի՝ տվյալ դեպքում «Մեդիտեք» ՍՊԸ-ի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, ուստի՝ գնահատող հանձնաժողովը գնահատում է այդ հանգամանքը որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, և որպես դրա հետևանք՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջի, այն է՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, խախտում:

3.1.14 Առաջնորդվելով Կարգի 67-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում «Մեդիտեք» ՍՊԸ-ի ներառված լինելու հանգամանքը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել ստուգել «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Մեդիտեք» ՍՊԸ-ի և «Պրո» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

3.1.15 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «Պրո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հրապարակված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և այն համեմատելով «Մեդիտեք» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի հետ, արձանագրում է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Վերգինե Մատենցյանը «Պրո» ՍՊԸ-ում 50% մասնակցություն ունեցող մասնակիցն է և գործադիր մարմնի ղեկավարը, ինչով հիմնավորվում է երկու ընկերությունների փոխկապակցվածությունը Կարգի 119-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունների համաձայն: Վերգինե Մատենցյանը Կարգի 119-րդ կետի 3-

րդ ենթակետի «գ» պարբերության իմաստով երկու ընկերություններում էլ հանդիսանում է կառավարման մարմնի պարտականություններ կատարող անձ: «Պրո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հրապարակված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի և «Մեդիտեք» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենները կցվում են սույն արձանագրությանը:

- 3.1.16 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ «Մեդիտեք» ՍՊԸ-ի փոխկապակցվածությունը «Պրո» ՍՊԸ-ին հիմնավորվում է հիմք ընդունելով լիազորված մարմնի կողմից վարվող գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակը, ինչպես նաև նշված ընկերությունների վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հրապարակված տեղեկատվության ուսումնասիրությունը:
- 3.1.17 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ հիմք ընդունելով կարգի 32-րդ կետի 9-րդ ենթկետը, այն է՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով հայտի ապահովման ներկայացման պահանջ չի ներկայացվել:
- 3.1.18 «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրում է, որ մասնակիցը չի ներկայացրել որակավորման և (կամ) պայմանագրի կատարման ապահովումներից որևէ մեկը, քանի որ վերջինս տվյալ ընթացակարգի շրջանակներում չի ձևաաչվել ընտրված մասնակից:
- 3.1.19 Հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի (ա) պարբերությունը, «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ բաժնի 2.3-րդ կետը, ինչպես նաև կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա», 3-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերությունները, 121-րդ կետը, 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերությունը և 32-րդ կետի 19-րդ ենթակետը, լիազորված մարմնի կողմից վարվող գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակը, «Պրո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում հրապարակված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը և «Մեդիտեք» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանի քաղվածքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգը թիվ 12-րդ
չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին

4.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված
Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի
համաձայն «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը 12-
րդ չափաբաժնի մասով օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա
հայտարարվում է չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:


5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և
ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝


(ստորագրությունը)

Ա. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝


(ստորագրությունը)

Գ. Մկրտչյան


(ստորագրությունը)

Հ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝


(ստորագրությունը)

Ս. Կարապետյան

Սույն արձանագրությանը կից՝

1. «Մեդիտեք» ՍՊԸ-ի կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով գնման
ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտի դիմում-հայտարարության
պատճենը,
2. ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2024թ.-ի թիվ 03/26-1/15404-2024
Պատվիրատուներին ուղղված շրջաբերական գրության պատճենը,
3. www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրից
կատարված, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վարվող գնումների
գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված
անձանց ցուցակի արտատպման պատճենը՝ առ 08.10.2024թ.,
4. «Պրո» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
Էլեկտրոնային համակարգում հրապարակված իրական շահառուների վերաբերյալ
հայտարարագրի և «Մեդիտեք» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց
պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենները:

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*
Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 12-րդ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

«ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ի՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 02643743
- բանկային հաշվեհամարն է՝ 2500010811660100
- գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան-0004, Ծ. Իսակովի 22/3
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝
- հեռախոսահամարն է՝ +37410779229 ,
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО МЕДИТЕК

Սույնով «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-25-ԵՊԲՀ»* ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում՝¹

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
 - բացակայում է հրավերով սահմանված՝ «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ -ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիստոն տոկոս «ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

• ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)* և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:


Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը
Վ.Մատենցյան	/անձնագիր BA 1080947, տրված 29.04.14, 011-ի կողմից/	

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«ՄԵԴԻՏԵԲ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Վ. ՄԱՏԵՆՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ
REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
GENERAL SECRETARY

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Փաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 04/35/22532-2024

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
ենթակա կազմակերպությունների
/ըստ ցուցակի/

Հարգելի գործընկերներ

Կից ներկայացնում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 2024 թվականի
հուլիսի 24-ի թիվ 03/26-1/15404-2024 գրությունը՝ գնման գործընթացներ
կազմակերպելիս առաջնորդվելու համար:

Առդիր՝ 2 էջ:

7/26/2024

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: HAKOBYAN HASMIK 5610800161

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

№ 03/26-1/15404-2024

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարգելի գործընկերներ

Հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 19/07/2024թ.-ից սկսել է www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակ» բաժնում հրապարակել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձանց փոխկապակցված կազմակերպությունների (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների) վերաբերյալ տեղեկատվություն:

Ցուցակում առկա տեղեկատվությունը վերաբերում է միայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ և որոշակի մասով «բ» պարբերությամբ նախատեսված դեպքերին:

Մասնավորապես ցուցակը՝ «բ» պարբերությամբ նախատեսված դեպքերին վերաբերում է միայն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառված կազմակերպության տնօրենի հետ փոխկապակցվածությանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ցուցակը թարմացվելու է յուրաքանչյուր աշխատանքային օրվա մինչև ժամ 12:00-ն և վերաբերելու է թարմացմանը նախորդող օրվա դրությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված անձանց փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությանը: Ընդ որում, համակարգում հասանելի են լինելու նախորդող ցուցակները ևս՝ ըստ աշխատանքային օրերի:

Միաժամանակ՝

- խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել պատվիրատուի համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՊՈԱԿ-ներին և հիմնադրամներին.
- ՀՀ մարզպետարաններին՝ խնդրում ենք սույն գրության պատճենը տրամադրել նաև մարզի վարչական սահմաններում գտնվող համայնքներին և վերջիններիս համակարգում գործող ՓԲԸ-ներին, ՀՈԱԿ-ներին և հիմնադրամներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Մեիրաբյան
Հեռ. 011800147

08.10.2024 09:56:01

Файл Вставка Ссылка Ресурсы Формулы Данные Ресурсы Вид Строка Ассорт Что вы хотите сделать?

Общий \$ % 00 76 40 Число

Шрифт Шрифт Размер шрифта Цвет текста Цвет фона

Выделить текст Выделить и поместить в центре

Вставить Удалить Формат Вставить Удалить Формат Вставить Удалить Формат

Стиль Стиль Стиль

Сортировка и фильтр

Найти и выделить

Настроить Настроить

Создать PDF и Share link

Получить подлинную копию Office

Получить подлинную копию Office

156	«ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	01329231	«ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	01335546
157			«ԱԼԼ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	00141886
158	«ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	01335546	«ՔՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	00107364
159			«ՔՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	01234179
160	«ՀՂ ԵՄԱՆ ԷՔՍ» ՍՊԸ	03530379	«ԼՈՒԿԱՆԱՆՆԵՐԻ ԴՈՒՍԿԻ ԱՅԽԱՍՏՈՒՆԵՐԻ ԱՐԿԿ» ՍՊԸ	02562528
161	«ՆՈՒՅԵՆ ԸԱՅԿ» ՍՊԸ	01322132	«Է ԵՎ Ա» ՍՊԸ	00134958
162			«ՏԵՏԵ ԸԱՅԿԱՎԱՆԱԿԱՆ ԿՈՒՅՆՈՒԹՅԱՆ» ՍՊԸ	08914703
163	«ՍԵՔՐԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԿՆՈՒՄ» ՍՊԸ	05555478	«ՍԵՔՐԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԿՆՈՒՄ» ՍՊԸ	05557782
164			«ԱՅԹԻ ԳԱՏԴ» ՍՊԸ	90030338
165	«ԱՍՅԱՍՏԱՆ» ՍՊԸ	00256628	«Ի Լ» ՍՊԸ	00160406
166			«ԳԻՏՈՒՄ» ԳԻՏԱԿԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՍՊԸ	00248311
167			«ԲԻ» ՍՊԸ	00248354
168			«Դ.Ֆ.» ՍՊԸ	02684092
169			«ՆԵՌՈՒ» ՍՊԸ	08282018
170	«ՊՈՒ» ՍՊԸ	02840134	«ԲԵՍԹ ԲՈՔՍ» ՍՊԸ	02605841
171			«ՊՈՒՊԻ» ՍՊԸ	02845111
172			«ՄԵԴԻԱՏԵ» ՍՊԸ	02643743
173	«ԻՐԵՎԱՆ 999» ՍՊԸ	02811283	«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՎՈՐՄԱՆ ԻՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	02628416
174			«ԻՐԵՎԱՆ» ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՉԱՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	02707524
175			«ԱՐՄՏԵՆ» ՍՊԸ	03549976
176			«ՎԱՍԵԼ ԳՈՒԴ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	01327557
177	«ԱՐՄԵՆԻԱԼԼՏԻ» ՍՊԸ	00907104	«ԱՐՄՏԵՆՏՈՐԳ» ՍՊԸ	03565509
178			«ԱՄՄԻ» ՍՊԸ	02540289
179			«ԱՐՄՏԱՊԵՏԿՈՒՑՈՒՄ» ՍՊԸ	01330113
180			«ԴԻՍԻՍԻՍՆ-ՏԵԿ» ՍՊԸ	01570044
181			«ՋՈՒՐ-ՉԻՆ» ՍՊԸ	90035385
182			«ՋՈՒՐ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	90034675
183	«Հ.Ն.Մ.Ա.» ՍՊԸ	01014398	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՈՒՆԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՍՊԸ	00885586
184			«ԱՏԵՓՅՈՒՆ» ՍՊԸ	07204159
185			«ՄԻՐՈՒՄ» ՍՊԸ	08254495
186			«ԱՏԵՓՅՈՒՆ» ՍՊԸ	02889388
187			«ԼՈՒԱՍԳ» ՍՊԸ	00065051
188			«ՔՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄՈՒՏԱԲՈՒՄ ԵՎ ՆՈՒՄ» ՍՊԸ	01224616



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-10-09

«ՄԵԴԻՏԵՔ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 286.110.878141

Հիմնադրման տարի 2015

Գրանցման ամսաթիվ 2015-11-10

Գործունեության ժամկետ Անժամկետ

Կարգավիճակ

Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 49655635

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 02643743

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) 43118141

Էլ. փոստ meditechgm@meditech.am

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ Փ. / 22/3 ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ
0004 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն ՎԵՐԳԻՆԵ ՄԱՏԵՆՑՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ

Անձնագրային տվյալներ BA1080947 2014-04-29 011

